«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհուրդ

ՈՐՈՇՈՒՄ N 1

18 դեկտեմբերի 2019 թվականի

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի «Ամբերդ» հետազոտական կենտրոնի հետազոտական թեմաների և հետազոտական խմբերի ձևավորման, դրանցում ասպիրանտների և ուսանողների ներգրավման կարգը» հաստատելու և գիտական խորհրդի՝ 2014 թվականի մարտի 26-ի նիստում (արձանագրություն N 5) հաստատված «Գիտաուսումնական խմբերի հետազոտական նախագծերի մրցույթի վերաբերյալ կանոնակարգը» ուժը կորցրած ճանաչելու մասին

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2005 թվականի հոկտեմբերի 6-ի N 1718-Ն որոշման 1-ին կետով հաստատված «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության 17-րդ կետի 8-րդ ենթակետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածով՝ «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է.

1. Հաստատել «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի «Ամբերդ» հետազոտական կենտրոնի հետազոտական թեմաների և հետազոտական խմբերի ձևավորման, դրանցում ասպիրանտների և ուսանողների ներգրավման կարգը» (կցվում է):

2. Գիտության գծով պրոռեկտոր Թ.Մ.Մկրտչյանին՝ 20-օրյա ժամկետում ապահովել «Ամբերդ» հետազոտական կենտրոնի գործունեությունը կանոնակարգող այլ փաստաթղթերի համապատասխանեցումը սույն որոշման 1-ին կետով հաստատված՝ «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի «Ամբերդ» հետազոտական կենտրոնի հետազոտական թեմաների և հետազոտական խմբերի ձևավորման, դրանցում ասպիրանտների և ուսանողների ներգրավման կարգի» պահանջներին:

3. Ուժը կորցրած ճանաչել «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի՝ 2014 թվականի մարտի 26-ի նիստում (արձանագրություն N 5) հաստատված «Գիտաուսումնական խմբերի հետազոտական նախագծերի մրցույթի վերաբերյալ կանոնակարգը»:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Գիտական խորհրդի նախագահ՝ **Դ. Ռ. Գալոյան**

2019 թ. դեկտեմբերի 18
Երևան